



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կոռյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3- Ն-7757

«17» սեպտեմբերի 2021թ.

«ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Աբրահամյանին

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. սեպտեմբերի 16-ի որոշմամբ 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից:

Հիշյալ ընթացակարգի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

Տեղեկացվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/17» ծածկագրով պայմանագրի նախագիծը տրամադրվել է համակարգի միջոցով: Առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/17» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել այն՝ միաժամանակ ներկայացնելով նաև որակավորման և պայմանագրի ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների (Ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2 և Հավելված 4.1) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին:

Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ՝**

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/17» ծածկագրով գնումը համակարգով՝ Դ. Թովմասյան
Հեռ.՝ 511-788, 511-792